



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

« 01 » 04 2025թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 077 - 25

Նախաձեռնող՝

«ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

Ք. Երևան, քոչարյան փ., 16 շ. Բն. 1

Գործունեությունը՝

Մթնածորի բազալտների հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասի
արդյունահանում

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 077 - 25

« 01 » սեպտեմբեր 2025թ.

Գեղարքունիքի մարզի Մթնածորի բազալտների հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնքի Գեղիովիտ բնակավայր

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Մթնածորի բազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասում «ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ 110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Մթնածորի բազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասն գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղիովիտ բնակավայրի վարչական սահմաններում՝ Մարտունի քաղաքից 15 կմ և Գեղիովիտ բնակավայրից 1,5 կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքից 1,7 կմ դեպի ձախ անցնում է Մարտունի-Սելիմի լեռնանցք-Գետափ (M-10) ավտոմայրուղին:

Հանքավայրի շրջանը գտնվում է Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաների միացման մասում: Հանքային դաշտը գեոմորֆոլոգիական առումով գտնվում է մեղմ թեքություններով (դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք) սարահարթի վրա՝ Արգիճի և Մարտունի գետերի միջագետքում: Հայցվող տարածքի 2-րդ տեղամասից 200 մ ներքև անցնում է Մարտունի գետի Դաշտիգետ վտակը: Հանքավայրի բացարձակ բարձրությունները տատանվում են 1845-1870 մ նիշերի սահմաններում:

Հանքավայրը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 կոորդինատային համակարգով).

1-ին տեղամաս

2-րդ տեղամաս

X=4434288.0	Y= 8523775.0	X= 4434821.3	Y= 8525059.9
X=4434396.5	Y=8523711.5	X= 4434978.4	Y= 8525067.1
X=4434505.0	Y=8523648.0	X= 4435158.0	Y= 8525079.1
X=4434569.0	Y=8523741.0	X= 4435332.0	Y= 8525105.0
X=4434449.5	Y=8523812.0	X= 4435333.0	Y= 8525151.0



X=4434330.0

Y=8523883.0

X= 4435150.8

Y= 8525131.3

X= 4434918.1

Y= 8525108.3

X= 4434818.8

Y= 8525116.5

Հանքավայրի ընդհանուր մակերեսը կազմում է 5.5 հա, որից 1-ին տեղամասը 3 հա է. 2-րդ տեղամասը 2.5 հա:

Հանքավայրի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հունիսի 16-ի թիվ 1081-Ա հրամանով: 2022թ. թվականի օգոստոսի 1-ի դրությամբ՝ պաշարների հաշվարկմամբ ըստ կարգերի՝ А – 214. 21 հազ. մ³, В – 224. 13 հազ. մ³: Ընդհանուր՝ 438.34 հազ.մ³: Հաստատված պաշարները որակական հատկանիշներով համապատասխանում են 9479-2011 ԳՈՍՍ-ի, ՀՍՍ ԳՕՍՍ 8267-95 և 8736-2014 ԳՕՍՍ տեխնիկական պահանջներին, կարող են օգտագործվել երեսպատման իրերի, կոպիճի և ավազի արտադրության համար, որպես լցանյութ ծանր բետոնի, ճանապարհային և այլ տեսակի շինարարական աշխատանքների համար:

Հիդրոտերկրաբանական տեսակետից հայցվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարների ներքին ժամանակավոր լցակույտերի տեղափոխումով: 1-ին տեղամասի բացահանքի բացումն նախատեսվում է տեղամասի հարավային մասից անցնող գրունտային ավտոճանապարհի 2420 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 2445 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող ճանապարհի անցումով: 2445-2420 մ նիշ ունեցող հորիզոնների բացումը իրականացվում է նշված մոտեցող ավտոճանապարհից՝ հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: Մոտեցող ավտոճանապարհի երկարությունն է՝ 370 մ, լայնությունը՝ 7-8 մ: 2-րդ տեղամասի բացահանքի բացումը նախատեսվում է տեղամասի արևմտյան մասից անցնող գրունտային ավտոճանապարհից՝ 2452.5-2407.5 մ բարձրության նիշեր ունեցող հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: 2405-2400 մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվելու է նույն մոտեցող ավտոճանապարհից՝ թեք խրամի անցումով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

1-ին տեղամաս՝ 1-А բլոկ

- ամենամեծ երկարությունը – 270 մ,
- ամենամեծ լայնությունը – 115 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը – 29.4 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 7,13 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ - 214.21 հազ.մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը – 194.32 հազ.մ³,
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 3.47 մ, որից՝ փխրուն առաջացումներ – 0.79 մ³, փուշտա – 79570 մ³,



- մակաբացման ապարների քանակը – 104.1հազ. մ³, այդ թվում փխրուն առաջացումներ՝ 18844 մ³, փուշտա՝ 85256 մ³,

բացահանքի օտարման մակերեսը – 30043 մ² (կամ 3,0043 հա, կլորացված ընդունվում է 3հա),

2-րդ տեղամաս՝ 2-Յ բլոկ

- ամենամեծ երկարությունը – 520 մ,

- ամենամեծ լայնությունը – 55 մ,

- բացահանքի առավելագույն խորությունը – 54,9 մ,

- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 8,84 մ,

- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները - 224,13 հազ. մ³,

- արդյունահանվող պաշարների քանակը – 170,9 հազ. մ³,

- մակաբացման ապարների միջին հզորությունը – 3,93 մ, այդ թվում՝ փխրուն առաջացումներ – 0,79 մ, փուշտա – 3,14 մ,

- մակաբացման ապարների քանակը – 99,6 հազ. մ³, այդ թվում՝ փխրուն առաջացումներ – 20030 մ³, փուշտա – 79570 մ³,

բացահանքի օտարման մակերեսը – 25354 մ² (կամ 2,5354 հա, կլորացված ընդունվում է 2,5հա): Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 19 տարի:

Հանքավայրում մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 203.7 հազ.մ³, այդ թվում՝ փխրուն առաջացումներ՝ 38874 մ³, փուշտա՝ 164826 մ³:

Շահագործման առաջին 5 տարների ընթացքում 1-ին տեղամասի մակաբացման ապարները, մինչև տեղամասի 2430 մ նիշ ունեցող հորիզոնների շահագործումը, ժամանակավոր տեղափոխվելու են բացահանքի հարավ, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան հատված՝ ձևավորվորելով արտաքին ժամանակավոր լցակույտ 2 հա մակերեսով՝ վերին հարթակի մակերեսը 1.35 հա, շեպի թեքությունը 33-35⁰, բարձրությունը 5 մ: 5-րդ տարվանից մինչև շահագործման ավարտը 2430 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց նախատեսվում է ներքին լցակույտաառաջացում: Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 3 հա, միջին բարձրությունը 7,5 մ: 1-ին տեղամասի բացահանքի շահագործված հորիզոնների վրա տեղադրվելու են ինչպես արտաքին լցակույտի ապարներն, այնպես էլ 2-րդ տեղամասի բացահանքի ամբողջ լցակույտ առաջացնող ապարները՝ 116595 մ³ ծավալով: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ջարդքարը /խճի հումք և մակաբացման ապարներ/ նախատեսվում է տեղափոխել մինչև 15-20 մ հեռավորության վրա գտնվող արդյունաբերական հրապարակ՝ պահեստավորման՝ սպառողի տրանսպորտային միջոցներով տեղափոխման նպատակով: Լցակույտաառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:

Հանքրդյունահանման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է 5.59 հա խախտված հողերի վերականգնում: Ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվելու են Կառավարության 2017թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան նախատեսվում է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական: Խախտված հողերի ռեկուլտիվացման համար նախատեսվում է գյուղատնտեսական ուղղությունը: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 2 մլն 272 հազ. 100 ՀՀ դրամ:



Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ ծախսերի և ֆինանսական հաշվարկով: Ըստ «Эко Центр» համակարգչային ծրագրով ներկայացված մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների՝ գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում բնակելի գոտիների համար սահմանված նորմերը: ՀՀ Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդի, մակերևույթային ջրերի, հողային ծածկույթի, կենսաբազմազանության, աղմուկի և թրթռման վերաբերյալ:

Ըստ ՇՄԱԳ հաշվետվության՝ հանքավայրի տարածքում և հարակից տարածքներում գերակշռում են լեռնատափաստանային, ենթաալպյան և ալպյան բուսականություն, անտառածածկ չէ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված պահպանության ենթակա բուսատեսակներ և կենդանատեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն /մեղմացմանն նպատակով նախատեսվում են մշտադիտարկումներ և մոնիթորինգ.

- մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ :

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լուսմներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետարանը, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում: Փորձաքննական գործընթացին մասնակցել է նաև ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության հանձնաժաղովը, որի կողմից ներկայացվել են բազմաթիվ դիտողություններ և առաջարկություններ, մասնավորապես՝ ջրային և հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունների գնահատման վերաբերյալ: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում: Սևանա լճից 1-տեղամասը գտնվում է 12,385 կմ, իսկ 2-րդ



տեղամասը 13,677 կմ հեռավորության վրա: ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվել են Սևանա լճի վրա հնարավոր բնապահպանական ռիսկերը կանխարգելող միջոցառումներ: Դիտարկվող տարածքից 200 մ հեռավորության վրա գտնվող Մարտունի գետի Դաշտիգետ վտակի և տեղամասի միջև նախատեսվել է ցամաքուրդային (դրենաժային) համակարգ, որի նախագիծային լուծումները կներկայացվի Գեղարքունիքի մարզպետարան՝ համաձայնեցման: Նախատեսվում է նաև կենցաղային կեղտաջրերի հավաքում բետոնային հիմքով հորատիպ զուգարանում, ինչը կդատարկվի ըստ լցվածության՝ պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպության կողմից:

2025թ. փոտրվարի 20-ին Գեղիովիտ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցած 4-րդ հանրային քննարկման ընթացքում, որին մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետարանի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները, ինչպես նաև ազդակիր համայնքի և բնակավայրի ներկայացուցիչները, ներկայացվեցին շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների մեղմման նպատակով մի շարք միջոցառումներ: «ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է՝ համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների, մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մամնի համաձայնեցմանը ներկայացնել մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերը: «Թափոնների մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 9-ի «Թափոնների գոյացման նորմատիվները և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» N 2291-Ն որոշման պահանջների համապատասխան, փաստացի տվյալների հիման վրա լիազոր մարմնի հաստատմանը Ընկերությունը կներկայացնի վտանգավոր թափոնների անձնագրերը և թափոնների կառավարումը կիրականացնի համաձայն ձեռք բերված թույլտվության:

Ներկայցված միջոցառումները ներառված են ՇՄԱԳ հաշվետվության մեջ, այն ընդունվեց հանրային քննարկման մասնակիցների կողմից:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվում է կատարել տարեկան 300 հազ. ՀՀ դրամ ֆինանսական ներդրում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրել տեխնիկա, խիճ և ավազ:

Ամփոփելով նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են հանքարդյունահանման աշխատանքների հետ, կկրեն տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ



- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն ներկայացնել տարեկան հաշվետվություն համաձայն՝ Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները (N 191-Ն որոշում, կետ 18):

- Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնել հանքի փակման վերջնական ծրագիրը:

- Հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, բնապահպանական նորմերի պահպանման նպատակով ձեռք բերել օրենքով սահմանված բոլոր թույլտվություններն ու և համաձայնությունները հանքարդյունահանման աշխատանքների իրականացմանը զուգահեռ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Մթնածորի բազալտների հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Ռուզան Մակինյան